ՆՈՐ-ԴԱՐ

№ 61 ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 6 Ապրիլ 1899 Երեքշաբթի, 6 Ապրիլ ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 61

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
или Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

Ներքսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնել, որ ամսոյս 7-ին, Ս. Աւետեաց տօնի օրը, Ս. Նշան եկեղեցում կատարուելու է դպրոցի բարերար

ԱՒԵՏԻՔ ՓԻՐՈՅԵԱՆՑԻ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ.

(49) 1 – 1.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Քաղաքական աշխարհից։
Պատրիարքական կոնդակ։
Քրոնիկոն. — Լուրեր։
Վեհափառ Կաթողիկոսի այցը Սանահնայ վանքին։
Թղթակցութիւններ. — Նամակ Թիւրքիայից, Վանից։
Քաղաքական. — Թիւրքիա։ Խաղաղութեան կոնֆերենցիան։ Կրետէ։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
Տեղեկատուներ։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 5 ապրիլի 1899 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Վերջապէս Հոլանդիայի արտաքին գործերի մինիստրն ուղարկել է եւրոպական, ամերիկեան և ասիական տէրութիւններին իսաղաղութեան, այլապէս պին ւելու առնմանափակման մասին Հաագ բաղարում կայանալիք կոնֆերենցիայի համար հրաւիրագրերը։

Հրաւիրուած է 19 պետութիւն, ամենամեծերից սկսած մինչև ամենափոքրը՝ Մօնտենգրոն (Չերնագորիան)։ Բուլղարիան, որ միշտ պինուում է և միշտ կարող է պատերազմի պատճառ դառնալ, չէ հրաւիրուած, որովհետև այդ կառավարութիւնը Թիւրքիայից կախում ունեցող տէրութիւն է ճանաչուած։

Չէ հրաւիրուած նաև Հռոմի պապը, որովհետև «պապատակ, գործ» չունի. բայց իսկապէս չէ հրաւիրուած նրա համար, որ Իտալիան բողոքել է դրա դէմ և յայտարարել, որ ինքը չի մասնակցիլ կոնֆերենցիային, եթէ պապը հրաւէր ստանայ։

Կոնֆերենցիային մասնակցելու հրաւիրուած է ասիական պետութիւններից և՛ Պարսկաստանը, որը, ի հարկէ, զինաթափման դէմ ոչինչ դժուարութիւններ չի յարուցանել. մինչև օրս Պարսից զինուորների և սպանների, զօրապետների մասին ոչինչ չենք լսել. մեր լսածները բոլորն էլ աստիճանաւորներին և պաշտօնեաներին են վերաբերում։

Ընդէն հրաւիրուած բոլոր տէրութիւնները նշանակել են իրենց ներկայացուցիչներին։

Գերմանիայի կողմից կոնֆերենցիային մասնակցելու համար նշանակուած անձերից մէկը՝ Մ՚ինխէնի համալսարանի պրոֆեսոր Փոն-Ջաննգելը սաբակուսանքի պատճառ է դարձել։

Բանն այն է, որ վերջերս լոյս է տեսել յիշեալ պրոֆեսորի հեղինակած մի աշխատութիւնը, բրոշիւրի ձեւով, որ խօսում, փաստարանում է ընդդէմ մշտական խաղաղութեան։ Անտարակոյս այդ բրոշիւրը լոյս հանելիս պրոֆեսոր Փոն-Ջաննգելը չի խմացել, որ իրեն Հաագի խաղաղութեան կոնֆերենցիային կուղարկեն։

Յիշեալ բրոշիւրում Մ՚ինխէնի համալսարանի պրոֆեսորը, հին և նոր կտակարանի վրայ հիմնուելով, աշխատում է հաստատել պատերազմի անհրաժեշտութիւնը, նրա կրօնական նշանակութիւնը, ինչպէս և կուլտուրական կատարելիքը։

Պատերազմը, յիշեալ պիտանի ասելով, ազգերի և պետութիւնների քաղաքական, ֆիզիքական և բարոյական յատկութիւնների ամենանշանաւոր փորձաքարն է։

Ի հարկէ պատերազմի կարևորութեան մասին այդպիսի մի համոզմունք ունեցող պիտանիին ամենաանյարմար անձն է խաղաղութեան կոնֆերենցիայում։

Բայց յիշեալ պիտանիը պատերազմի անհրաժեշտութեան կողմը լինելով, հ՚ս չի կարող անմեղ տեղն արիւն թափելու պաշտպան լինել և անշուշտ ընդունում է, որ ժողովուրդների աշխատութեան և արիւն-քրտինքի մեծ մասը պինուելու վրայ ծախսելով ազգերը չեն բաղդատուել և լուսաւորութեան գործն առաջ չի ընթանալ։

Իւր բրոշիւրի մէջ Փոն-Ջաննգել պրոֆեսորն ասում է արդէն, որ «ոչ ոք իւր սաբսափելի հետևանքներով արիւնահեղ պատերազմ չի ցանկանալ». նա միայն մշտնջենական խաղաղութեան դէմ է, իսկ Հաագի կոնֆերենցիան մշտական խաղաղութիւն հաստատելու համար չէ կոչուած։

Ընդէն ֆրանս-պրուսական պատերազմի ակզբում, 70 ական թը-

ւականին, Լայպցիգի համալսարանի պրոֆեսորը երեսի ծաշերը իւր դասախօսութեան միջոցին պսիխիկկոնոմիայի վերաբերեալ յայտնել էր այն միտքը, թէ երկու մեծ ազգերի մէջ պատերազմը examena rigorosa մեծ քննութիւն է, որով երկու ազգերը հրապարակ են իջնում իրենց մշտաւոր, բարոյական, ֆիզիքական այժերով և ապացուցանում են իրենց կուլտուրայի աստիճանը։ Անտարակոյս յարգելի կողմը նա կլինի, որի մտաւոր, բարոյական և ֆիզիքական այժերն աւելի գերազանց են հակառակ կողմի համանման այժերից։

Այդ խօսել է Լեւեզի ծաշերը 1870-ին, Ֆրանս պրուսական պատերազմի սկզբում, երբ Ֆրանսիան և Գերմանիան պինուած արդէն կռւի դաշտն էին իջնում։

Ուրեմն զարմանք չէ, որ ամեցեալի հարուստ փորձերի վրայ հիմնուած, նոյն Գերմանիայում, մի քանի և հինգ տարուց յետոյ մի գերմանացի պիտանին նոյն միտքը յայտնէ ուրիշ ձեւով։

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ԱՂԱՔԻՆ ՅԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԱԾՈՅ ՀՕՐ ԵՒ ՀՆՈՐՀԻՒ Ս. ՀՈԳՒՈՅՆ ԵՒ ԿԱՄԱՒՔ ԱԶԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Ց. ՊԱՅԼՈՅՆ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ

Հարազատ զաւակաց Սրբոյ եւ Ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց, սիրեցեալ որդւոց մերոց, շնորհք, սէր եւ խաղաղութիւն ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, եւ ի մէնջ ողջոյն եւ օրհնութիւն տիրապետի։

Պատրիարքական պաշտամանս վրայ ծանրացած պարտաւորութիւնները կրստիպեն մեզ հոգ տանիլ ամեն գործոց և խնդրոց, որ մեր սիրեցեալ ազգին բիւրապսի պետութից կրպատահին։ Բայց աւելի յաճախ և աւելի զգալի կերպով հարկ կըլինի մեզ անոր նեղութեանց դիւրութիւններ որոնել, անոր կարօտութեանց դարմաններ ճարել, և անոր վիշտերը թեթևացնելու աշխատիլ. և առ այս մեր Օգոստափառ և Մեծազօր Ինքնակալին առջև պարզել նորա պէտքերը, և Կայսերական Գահավարութեան մտադրութիւնը հրապրել լուծման կարօտ խնդրոց վրայ. բաղխել բարեսիրաց սրտին դուռները նպաստներ հայցելու, և բաշխել քաղցելոց և ծարաւելոց անոնց զուարթատատ նուէրները. հոգ տանել եկեղեցիներու չինութեան և պայծառութեան, սէր կանգնել որդւոյն և խնամակալ այրւոյն՝ որքան մեր տկար միջոցներ կընձերին, քաջալերել դպրոցաց և ուսմանց աճումն ու զարգացումը, հսկել ներքին բարեկարգութեանց, յորդոր կարդալ ամեն ապիճանէ պաշտօնէութեանց, միով բանիւ Պատրիարքական պաշտաման վրայ դրած բոլոր պարտաւորութիւնները անթերի կատարել։

Սակայն պէտք չէ մոռնանք, որ այդ ամեն պէտքերուն մէջ կայ մէկ մը որ առաջ քարձր և աւելի վեհ է, պէտք մը որ ներքին է, և արտաքիններէն աւելի մեծ մտադրութիւն կրպահանջէ միտքէ, այն իրաւամբ՝ զոր ըստ Աւետարանին ունի հոգին, որ առաջ է քան զմարմինս։ Այդ պէտքը մեր հաւատքն է, մեր կրօնքը, մեր դաստիարակութիւնը, մեր եկեղեցին։ Եթէ ստէպ առիթ չունէր մեզ՝ այդ կարևոր նիւթով զբաղիլ, պատճառն այն է, որ մեր օրհնեալ ժողովուրդը ինքնին իսկ սրտով և հոգւով հաստատեալ է ի նմին, և Լուսաւորչի լոյս հաւատքը Հայ բրիստոնէին համար բարութեան խարիսխն է և ակնկալութեան նշանը, յորում կըգտնէ իր ըղձից յաղթութիւնը և իր զբաղմանց պսակը։

Ժամադրաբար այս օրերը ինչ ինչ արխուր լուրեր կընդանին մեզ. վասն զի կըլսուի թէ կան ոմանք որք արտաքին վշտաց մէջ ընկղմած և բազմազիմի կարօտութեանց բեռին տակ չփոթած՝ երբ անյագ տենչանօք մխիթարութիւն և օգնութիւն կորոնեն, կընդառիբրելն իրենց Ս. Եկեղեցիէն բաժնուիլ, և կը յորդորուին անոնցմէ՝ որք կարծել կուտան իրենց թէ Ուղղափառ դաստիարակութենէն փոփոխելով կընան ձախորդութեանց դարման գտնել և յաջողութեանց միջոց ճարել։ Բայց ով երբէք սովրեցաւ, սիրելիք, որ անհատատարմութիւն կընայ բարօրութիւն բերել։ Մօրը դէմ նենգութիւն՝ կընայ երբէք երջանկութիւն պատճառել. Մայրենի Եկեղեցւոյ դէմ անարգութիւն կընայ երկինից օրհնութիւնը հրապրել։ Մեր ազգը փորձառու է փորձանաց, և դժուարութիւնք մէ այսօր սկսան և մէ երէկ. Հայ քրիստոնեան իր հացակարօտ վիճակին մէջ երախտապարտութեամբ առաջաւ ամեն ազգէ բարեսիրաց և բարերարաց ողորմութիւնը, իրենց կարկառեալ ձեռքը համբուրելով՝ ընդունեցաւ կարօտութեանց դարմանը։ Չէ, սիրելիք, մեր Փառապանծ և Ինքնակալ Վեհապետն Օգոստափառ Սուլթանը կրօնափոխութիւնը պէտման դրած չէ մեզի, որ նպաստի և օգնութեան և պաշտպանութեան արժանանանք, և բացարձակ հրամանով հրամայած է և կուզէ որ Հայերը իրենց Ազգին ու Եկեղեցւոյն մէջ մնան հաստատուն և անփոփոխ։

Ընդհանուր Քրիստոնէութեան բարեսէր նուիրատուք՝ նպաստներ ընձեռած առնէն մեր դաստիարակութեան փոփոխութիւնը պահանջած չեն. գոնէ ալ, սիրելիք, այս ամենը լաւ գիտէք։ Ինչ որ այդ վերջի օրերուն մէջ օտար դաստիարակութեանց ծառայողներէն ոմանց բերնէն լսուած է, բարեսէր նուիրատուաց վեհ դէպատնից արտայայտութիւնը չէ։ Մարդասէր և ազնիւ նուիրատուաց հաւատարիմ թարգմաններն չեն անոնք, որք իրենց քմահաճոյից մէջ կրսահմանեն այդ նոր ձեր, իսկ Հայ քրիստոնէին հայ ապրելու համար՝ հաւատքը փոխել կրպահանջեն, զգեստ ապրելու համար եկեղեցին մերկանալ կաւազարկեն։

Մի վտահիք, սիրելիք, այդպիսեաց, որ նուիրատուաց բուն կամքը ու միտքը չեն խօսիր. մի հաւատաք անոնց, որ դաստիարակութեամբ միայն նպաստից ապաստութիւն կը յուսադրեն։ Վասն զի դիք թէ բուն ողորմածները բանիւ և գրով կըմիջեն այդ ստորին տուրհառը։ Առաքինի բարեսէրք և ճշմարիտ բարերարք միշտ կան և միշտ կրմնան ընդհանուր Քրիստոնէութեան մէջ, և մեք կարող ենք մեր հնաւանդ Եկեղեցւոյն հաւատարմութեամբ վայելել հանապազ ողորմածաց ողորմութիւնները, մանաւանդ թէ աւելի ևս պատուով, որովհետև այսու կրցուցնենք թէ՝ երբ երախտապիտութեամբ կընդունիմք ընծաներ պատշաճ նպաստ, հացի պատառի կամ պղպեղի պատառի մը համար խիղճ և հաւատք չենք վաճառեր։

Յիշեցէք, Սիրելիք, այն հրաւէրը, զոր ըրինք կանխաւ ձեր դիմութեան, և զոր նորէն կրկրկնեմք. յիշեցէք որ մեր հացակարօտ եղբարց վիճակը ամենուն սրտին ամենէն ազնիւ թելերը կրթրթռացնէ, և ամենէն փափուկ զգացումները կրշարժէ։ Իրաւ է որ մեր ազգայնոց հասուցած նուէրներով, այս երկու տարի է նպաստներ ևս յղացինք հետզհետէ, օգնեցինք կարօտելոց և քաղցելոց, որբանոցներ բացինք և որբեր պատսպարեցինք։ Սակայն մարդկութիւնն, արհնակցութիւնն, գաստիակցութիւնն, ազնիւ սրտերու ազնուագոյն շարժիչներ, կրյորդորեն դմեզ չարունակ, ցորչափ կըտեսնեն կարօտութիւնը և նորանոր պարագաներ կըզգենուն. և եթէ օտար ազգեր և օտար դաստիարակութիւններ կարեկցաբար կընային միշտ մեր խղճալեաց, կրբանան իրենց սիրտերը, կրբանան իրենց քսակները, որչափ ևս առատ գոլ, Սիրելիք, նոյն Մօր Եկեղեցւոյ սիրասնուէտ զաւակներ, պէտք է յօգնութիւն փութայք ձեր գաստիարակաւոր նուէրներով, հարուստ իր կարողութեան տուրքերով, արհեստաւորն իր քրտանց արդիւնքով, նոյն իսկ համեստ ազգայինն իր սրատարուղիս լումայով։ Ահա մեր եղբայրներ որք ամեն տեսակ կարօտութեանց հայցուածներ կընծեցնեն և կոդկողանաք կրբաղխեն բոլոր աշխարհի և մանաւանդ իրենց երբայրակցաց սիրտերուն գթութեան գաւառները։ Ազէ, Սիրելիք, սիրեցէք ձեր եկեղեցին, սիրեցէք գործով և արդիամբ սիրեցէք ձեր եղբայրները, սիրեցէք տրովք և նուիրօք։

Այլ ինչ ըսենք անոնց, որք Հայ եկեղեցւոյ ծոչէն անջատեալ, բայց Հայ եկեղեցւոյ հարազատներն ըսուելու պանծանօք և Հայ եկեղեցւոյ անուամբ խօսելու կամաք, երբ մեր սուրբ Հարց դաստիարակութիւնը ներկայիս կրձևացնեն, իրօք մեր սուրբ Հարց դաստիարակութիւնը կայլայլեն։ Որք երբեմն Հայաստանեայց Սուրբ և Ուղղափառ եկեղեցին հերձել և հերետիկոս կոչումներով նախատել չէին խղճար, այժմիկ կուզեն կամայական դարձուածներով իրենց պաշտպանաժին նոյն և նման ցուցնել. և այն ձրի հեթադրութեամբ թէ մեր պահած նախնական հայ դաստիարակութիւնը՝ իրենց մտաբերած լատինամիտ դաստիարակութենէ տարբերութիւն չունի, և թէ Հայաստանեայց Առաքելական և Ինքնուրոյն Ս. Եկեղեցին՝ ուրիշ մասնաւոր եկեղեցւոյ մը հատուածն լինի, հրաւէր կը կարդան ապահով և համարձակ անցում մ՚րնել, Հայ Եկեղեցին թողուլ և ուրիշ եկեղեցւոյ աչակերտիլ։ Եթէ Հայ Եկեղեցին ըսածնուն համեմատ է, եթէ *մեր Սուրբ Հայրց դաստիարակութիւնը* իրենց կարծածն է, ինչու կրյոգնին, և դմեզ մեր տեղէն չարժել կուզեն։ Մենք մեր Սուրբ Հարց դաստիարակութիւնը անխարդախ պահած ենք որբէք չարական չենք սրբագրած, աղօթքները չենք փոփոխած, գրուածները չենք այլայլած, վկայութիւններ չենք յօրինած, մենք համարձակ և անխարդախ կրպահպանենք մեր Նախնեաց նուիրակն առնդր, և չենք կրնար չդատիլ անոնց վրայ որք յանդգնեցան մեր սուրբ

1899— № 61

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հանհամաշնորհատոտի ձմռվժատոյ

Հեռագիր 1-ից 31-ը դեկտեմբերի «Ռուս-մամ»-ից ևս մի հետաքրքրական նամակ ենք ստանում Ալաշկերտի գավառից։

Ես էլ ուզում եմ ձեզ մի բան գրել, որ ինձ համար անհասկանալի է մնում։ Ինչո՞ւ է մեր ազգային մամուլը այդքան անտարբեր մեր ազգային կյանքի հանդեպ։ Ինչո՞ւ է նա այդքան ուշադրություն դարձնում ամեն մի ազգային երևույթի վրա, որ ունի ազգային գույն, ինչո՞ւ է նա ամեն մի ազգային շարժում ուզում տեսնել միայն ազգային տեսակետից։

ԹՂԹԱԿՑՈՒԹՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

ՎԱՆ, 22 մարտի. — Մեր ուսանողական գործն ղպալի մի հարուած կրեց այսօր, բռմմարդիւն ուսուցիչներից և օգտաշատ գործիչներից մէկի՝ Եղիշէ Դանիտազեանի՝ ցաւալի մահով։

Հանգուցեալը բնիկ վանեցի՝ մօտ 35—36 տարեկան, ուսանելով ժամանակին Վանում հաստատուած Միացեալ ընկերութիւնների վարժապետանոցի և ապա նրան յաջորդող Կեդր. վարժարանի մէջ, ընթացաւարտ լինելուց անմիջապէս յետոյ իսկ Բիթլիսում ուսուցչութեան կոչուեցաւ, ուր պաշտօնավարեց անընդհատ չորս տարի, որից յետոյ նոյն գործը շարունակեց Վանի քաղաքամիջի Տիրամօր և Յիսուսեան վարժարաններում։ Իսկ կոտորածից վերջը Յանկոյներ և Նորաչէն թաղերի միացեալ ուսումնարանի ուսուցչապետութիւնն ստանձնեց և յաջողակութեամբ վարեց մինչ օրս, իւր մահը։

Հանգուցեալը դեռ մի քանի ամիս առաջ միայն ամուսնացած էր նոյնպէս բռմմամեայ վարժուհիներից Սանասարեանի Սանդխտեան և Յանկոյների օրիորդական ուսումնարանների ուսուցչուհի վչտահար Եղիսաբէթ Ամէմեանի հետ, որն այսօր մնում է այրի։

Առանց այն էլ ծանօթ հանգամանքների չնորհիւ ամուսնութեան և անչարժուքեան դատապարտուած մեր դպրոցների կացութիւնն, իրենց աննախանձելի դրութեամբ, մեր երկրի ամենից աւելի աչքի ընկնող տխուր երեւոյթներից մին լինելով մեր ծանրիկ սերնդեան մտաւոր այս զրկանքն անկարելի էր որ զգայուն սրտերին վիշտ չպատճառէր, մանաւանդ որ ողբացեալն ուսուցիչ լինելուց զատ և խղճամիտ հասարակական գործիչ էր. հասարակական գործիչ, որի, ներկայ կրիտիկական դառն օրերի և ժամանակների մէջ, ամենից աւելի պէտքն ու կարիքն զգայում է։ Այս հանգամանքներն ի նկատ առնելով հասկանալի է, թէ ինչու յիշեալ վաղամեռիկ Դանիտազեանի մահը ներկայումս հասարակային տուգի մի երեւելին է զգենում։

Իրեն չահերին նուիրուած այդ անմոռաց և անձնուէր որդուն, ժողովուրդը պատրաստում է հանդիսաւոր յուղարկաւորութեամբ յաւերժացնել յիշատակը։

Մ.

ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ. — Կ. Պոլսի բրիտանական դեսպանը մարտի 30-ին (18-ին) լորդ Սոլսբըրիին հեռագրեց, որ ինքն ամենավճռական առաջադրութիւններ է արել մեծ վեզիրին այն բանի համար, որ դեռ ևս բաց մնացած որքանոցները չբափակուեն, իսկ արդէն փակուածները վերստին բացուին։ Մեծ վեզիրը պատասխանեց, թէ սպասում է միայն ներքին գործերի մինիստրի զեկուցմանը, որպէս զի որոշէ, թէ ինչ պէտք է անել, և կատարելապէս գնահատում է այդ հաստատութիւնների հիմնադիրներին զեկաւարող չարժանիքները։ Դեսպանն ուրախութեամբ նկատում է, որ վերջին մի չարաթուայ մէջ բաց մնացած որքանոցներից ոչ մէկը փակուած չէ։ Լորդ Սոլսբըրին այդ հեռագիրը հաղորդել է անգլօ-հայկական ընկերութեան նախագահ Ուհսոմինիասլի հերոցին։ Անգլիական պատգամաւորների ժողովում, ինչպէս յայտնի է հեռագրներից, այս օրերս հաղորդուեց, որ փակուած որքանոցներն արդէն վերստին բացուած են։

—Երկրի քայքայուած դրութիւնը, ինչ պէս յայտնի է, պատճառ է դարձել, արքունի գանձարանի դատարկման։ Գործերը կարգի դնելու համար և ապագայ անխուսափելի անկարգութիւնների առաջն առնելու համար կառավարութիւնը փող է որոնում արտասահմանում։ Լորդ Ռոզբերու այցը, լրագրների ասելով, մխիթարական ոչ մի հետևանք չունեցաւ, որովհետև փոխառութիւնն ապահովելու համար Անգլիայի առաջարկած պայմանները Թիւրքիայի համար ծանր են։ Ռոզբերին խոստացաւ «ամեն հնարաւոր միջոց գործ դնել այդ պայմանները թեթևացնելու համար, իսկ Ելգրդ Քէօշկում սկսել են քննել անգլիացիների առաջ, մինչև որ Լոնդոնից արուած խոստումը նպաստաւոր հետևանք ունենայ։

—Կ. Պոլսի զինուորական ուսումնարանում կրթուող բիւրդ իւնկերներն այս օրերս մեծ անկարգութիւններ են յարուցել։ Բանն այն է, որ բիւրդ երիտասարդները, եամակայ դասընթացն անցնելով քաղաքային ուսումնարանում, մնում են մի տարով զինուորական ուսումնարանը, ուր զինուորական արհեստը վայր ի վերոյ սովորելուց յետոյ, ոսպայի աստիճան են ստանում և մնում համի դիէ հեծելազօրը։ Այս կարգն ահա տասը տարի է, որ գոյութիւն ունի, և քիւրդ իւնկերները (50 — 60 հոգի) ունին իրենց սեպհական դասարանն ու առանձին ծրագիրը։ Մինչև այս տարի, երբ կառավարութիւնն սկսել է աւելացնել իւր զինուորական ոյժերը և բրդական գնդերի թիւը հասցրել է 67-ի, ինդիր էր յարուցուած այս զօրարաժիններին տալու աւելի հմուտ և կրթուած սպաներ։ Այդ բանի համար այս օրերս մի իրադէ հրատարակուեց, որի զօրութեամբ քիւրդ իւնկերներին այսուհետև մի տարուայ փոխարէն վեց տարի պիտի ուսանին զինուորական ուսումնարանում։ Քիւրդ ուրիտասարդները, որոնցից ուսման և կրթութեան ծախքը նոյնքան հեռու է, որքան և գեաուր դառնալու միտքը, յուզուեց և դասատու-գնդապետի առաջին իսկ դասախոսութեան միջոցին սուր քնած ձևացան և սկսեցին միասին բարձրաձայն խոմփացնել դասատան մէջ։ Դասատուն չտապեց այդ մասին յայտնել դասատան տեսչին և հերթապահ սպային, և կարճ ժամանակից յետոյ նրանց հետ վերադարձաւ դասատուն, ուր իւնկերները չարունակում էին իրենց քնած ձևացնել։ Տեսուչ գնդապետն իւնկերներին ի կարգ հրաւիրեց, բայց նրանք բոլորը միասին յանկարծ վեր թռան տեղներից և մի լաւ ջարդ տուին իրենց երեք իշխանաւորներին, որոնց ազատեցին կանոնաւոր գօրքերի՝ ադմուկի վրայ ներս թափած իւնկերները։ Այդ բաւական չէր, իւնկերները նոյն օրը մի բնակարան վարձեցին քաղաքի կեդրոնում գտնուած փամփուշտների պահեստի մօտ և հետևեալ օրուայ լուսադէմին կրակ տուին այդ բնակարանը։ Հրդեհն անպատճառ ահագին աղէտներ պիտի պատճառէր, բայց անգլիական պահականատից պահապան նաւատորմի ժամանակին նկատեց այդ և նրա տուած ազդանշանով, թրքական հրշէջներից առաջ, հրդեհի տեղը հասան եւրոպական պետութիւնների Ոսփորում կանգնած պահականատների հրշէջների խմբերը, որոնք և կարողացան փամփուշտների պահեստը դերծ պահել բռնկելուց։

—

ԽՈՂՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ. — «Standard»-ի Բերլինի թղթակիցը խոսակցութիւն է ունեցել չատ դիւանագէտների հետ Հագէի կոնֆերենցիայի մասին, և նրանք բոլորն էլ այն կարծիքն են յայտնել, որ կոնֆերենցիան անյաջողութիւն կրել չի կարող։ Այդ վեհաժողովն անպատճառ պէտք է որևէ որոշ հետևանք ունենայ եթէ ոչ դինաթափ անելու, գոնէ քաղաքակրթական ազդեցութեան ուրիշ ուղղութեան տեսակէտից։ Վերին աստիճանի անհնարին բան է համարւում, որ եւրոպական վէճերն այսուհետև լուծուեն միջազգային միջնորդ դատարանով, բայց ամերիկական դեսպանն այն կարծիքն ունի, որ Միացեալ Նահանգները բոլոր վէճերում կրգիման միջնորդ դատարանին, որովհետև համեմատաբար քիչ զօրք ունին իրենք վէճը պատերազմով լուծելու համար։

—

ԿՐԵՏԷ. — Աթէնքից «Polit. Corresp.»ին հաղորդում են, որ Կրետէի բարձրագոյն կոմիսար Դէօրգը հրաժարուել է Կ. Պոլիս այցելելու մասին բերուած նրանից անակնկալ դժուարութիւններ յարուցուած լինելու պատճառով։

—Ընդհանուր Դէօրգը յանկութիւն է յայտնել, որ պետութիւնների հիւպատոսները Կրետէում պիւանագիտական ներկայացուցիչների կոչում ստանան։ Սակայն առ այժմ ոչ մի նշան չկայ, թէ պետութիւնները որոշած լինին այդ յանկութիւնը կատարելու։

—Կրետէի վարչական նոր խորհուրդը, որը նման է պետութիւնների մինիստրական խորհրդին, կազմուած է չորս բրիստոնեայից և մի մահմետականից։ Սահմանադրութիւնը կը հրատարակուի Զատկի տօներին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Առաջին ցիւնդր գլխարկը.—Անգլիերէն մի հին, հարիւր տարի առաջ լոյս տեսնող լրագրի 1797 թուականի յունուարի 16-ին լոյս տեսած համարում ցիւնդր-գլխարկի ընկերնուագութեան մասին հետևեալն է եղել հրատարակուած։

«Ջոն-Հեդհերինգտոն գործարանատէրը, համարձակ խաղադութիւնը խանգարելուն և կոպիտ անկարգութեան համար մեղադրուած լինելուն, երէկ դատարանը նրան 500 ֆ. ստերլինգ (մօտ 5 հազար րուբլի) գրաւականով բանտարկութիւնից արձակեց։ Վկաների յայտնութեամբ պ. Հեդհերինգտոնը, որ ճանաչուած է քաղաքում իբրև մի ազնուաբարոյ քաղաքացի, դուրս է եկել փողոց՝ գլխին դրած մի ինչ-որ բարձր բան, որ և ծռտայել է իբրև փաստ նրան մեղադրելու։ Այդ բարձր բանը, պզպզուն է, արդարև զարհուրելի բան է ոստիկանների յայտնութեամբ կանայք այդ սարսափելի բանը տեսնելով ուշաթափուել են, երեխաներն ահից ըսկսել են լաց լինել, բղաւել, իսկ չնորը հաչել. կոշկակար Թոմասի փոքրիկ տղան, որ մոմ առնելու էր գնացել, սարսափելի չափութեան ժամանակ ընկնում է ամբողջ սարքերի տակ և կոտրւում է նրա աջ թեը։ Մեղադրուած պարոնը փորձեց իրեն արդարացնել, առարկելով որ Անգլիայում գլխարկների գործածութեան և տեսակի մասին մի որև օրէնք չկայ և թէ իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի իր գլուխը ծածկելու մի ծածկոց հնարելու և հագնելու, և թէ այդ իրաւունքից ոչ մի անգլիացու զրկել չի կարելի»։

Ուրեմն 102 տարի առաջ ցիւնդրը Լոնդոնի բնակիչների համար—մի սարսափելի զազան է եղել...

—

Թղթէ ճաշարան.—Համբուրգում թղթէ մի ճաշարան է չինուած, որի կմոդքը թէև մետաղէ է, բայց պատերը բոլորովին թղթեայ են և սախտակամածն էլ ստուարաթղթից (կատոն) չինուած։ Ջէնքի արտաքին զարդերն ամբողջ թղթից են՝ ինչպէս նաև կարասիների մեծ մասը։ Ճաշասրահը, որ 30 մետր երկարութիւն և 6 մետր լայնութիւն ունի, կարող է պարունակել 150 հոգի՝ նստած։ 2մեռ ժամանակ տաքութիւնն ապահովուած է բոլորովին նոր գերութեամբ չինուած մի ջեռմոցով։ Հաշուած է, որ այս բաւական ընդարձակ չէնքի համար ծախսուած է 1500 մարկ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի. — «Պրաւիտ. Վեստ.» ում մանրամասն հաղորդագրութիւն է հրատարակուած ուսանողական անկարգութիւնների պատճառների և ընթացքի մասին, որի մէջ ասւում է, որ չարժումը սաղածուել էր պետութեան գլխաւոր բարձրագոյն դպրոցների վրայ։ Ամեն տեղ գտնւում է երկու հոսանք՝ — չափաւոր, որը պաշտպանում է կարգի վերականգնումը, և ծայրայեղ, որը պահանջում է անկարգութիւնները չարունակել համալսարանական իշխանութիւնից դիւրութիւններ և զիջումներ ստանալու նպատակով։ Այս չարժման զեկավարն է Պետերբուրգում այսպէս կոչուած կազմակերպիչ մանաժողովը, որը կոչեր և հրաւէրներ է հրատարակել։ Չարժման պարագլուխները ձերբակալուած են և դանազան արգելուած հրատարակութիւններ են գրաւուած։ Բարձրագոյն դպրոցների չարժման պարագլուխները յարաբերութիւնների մէջ են և տեւորի են ենթարկում կարգի վերականգնումը պահանջող մեծամասնութեանը։ Անկարգութիւնները տեղի ունեցան Պետերբուրգի, Մոսկուայի, Կիևի, Օդեսսայի, Խարկովի, Իւրևի, Վարշաւի և Տոմսկի համալսարաններում, Պետերբուրգի տեխնոլոգիական, հանքային և անտառային ինստիտուտներում և Նոր Ալէքսանդրիայի երկրագործական դպրոցում։ Խռովարարները պահանջում են, որ նորից ընդունուեն և ներում ստանան իրենց յանցաւոր բոլոր ընկերները և փոփոխութիւն մտցուի համալսարանական տեսչութեան մէջ։ Պետերբուրգի կազմակերպիչ-մանաժողովը հրատարակել է մի յանդուգն կոչ, որը ցոյց է տալիս չարժման հակակառավարչական բնաւորութիւնը և այն՝ թէ անհրաժեշտ է կռուել, քաղաքական ռեֆորմներ ստանալու համար։ Այդ կոչն ուսանողների մեծ մասի մէջ զայրոյթ յարոյց, ուստի կոչը չտարածուեց։ «Պրաւիտ. Վեստ.»ի հաղորդագրութիւնը վերջանում է հետևեալ խօսքերով. «Զնայելով, որ անկարգութիւններին մասնակցում էր ուսանողների համեմատաբար փոքրամասնութիւնը, այնուամենայնիւ անհրաժեշտ հանդիսացաւ բարձրագոյն դպրոցների մեծ մասից արտաքսելու բաւական նշանաւոր թիւով ուսանողներ, որոնց անկարգութիւնները չարունակելու համար ցոյց տուած յամառութիւնը հնարաւորութիւն չէր տալիս այլևս պահելու այդպիսի ունկնդիրներին ուսանող երիտասարդութեան մէջ։ Այս միջոցը ձեռք կառնուի այսուհետև ևս, որովհետև ուսանողների պահանջմամբ չի կարող թոյլ արուել ոչ մի չեղում գրգռական հաստատութիւնների մէջ գոյութիւն ունեցող կանոնադրութիւններից, օրէնքներից ու կանոններից և ուսումնական պարապմունքների համար սահմանուած կարգից ինչպէս որոշուած ժամանակից։ Այս մի ջոյն արձակուածներից չատերին, որոնք սիսափել են իրենց պատասխանեական անգիտութեան ու անփորձութեան մոլորութիւններից, չի զրկիլ նորից ընդունելու դպրոցները և վերջացնելու իրենց կրթութիւնը. բայց, յամենայն դէպս, այս զիջումը հետևանք կլինի միայն այն բանի, երբ նրանք հաւակացած կլինին իրենց սխալն ու մոլորութիւնները, և ոչ թէ հետևանք նրանց հաւաքական բռնի գործողութիւնների, որոնց դիմում են նրանք այն սխալ հաշուով, թէ դպրոցներից նշանաւոր թիւով ուսանողներ արձակուելովն այդ դպրոցները դժուար կացութեան մէջ կըմնան։ Ինչ վերաբերում է նրանց, որոնք, դէպքից օգուտ քաղելով լարում են իրենց չանքերը, որպէս զի ուսանող երիտասարդութեանը մղեն հակակառավարչական և դպրոցների նշանակութեան հետ ոչ մի կապ չունեցող նպատակի հետամուտ եղող յանցաւոր գործողութիւնների ճանապարհը, — այդ անձերի վերաբերմամբ խստութեամբ ձեռք կառնուին օրէնքով սահմանուած պատժական միջոցները»։

ՊԱՐԻԶ, 2 ապրիլի.—«Figaro»ի մէջ հրատարակուած են մայոր Լաուտի, արխիւիստ Դրիւրլէնի և գեներալ Բուագելբերի յուշմունքները։ Այդ յուշմունքների մէջ նոր ոչինչ չկայ։ Լրագիրը հաւատացնում է, որ համաձայնութիւն է կայացած Ռուժէին Տարցուվրթի ենթարկելու Պիկարի, Կևինէի, Պալէօլոգի և Մաստենի հետ դէմ առ դէմ. նմանապէս որոշուած է, որ լրացուցիչ քննութիւն չկատարուի։

ՉԱՆԶՀՉՈՒՑ. — «Deutschland» նաւով այստեղ ժամանեց պրուսական պրինց Հենրիխը և ստանձնեց նաւատորմի հրամանատարի պաշտօնը։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ. — Սամօայի յանձնաժողովը մտնենց Սան-Ֆրանսիսկոյից Ոսկեկալ Լաուային հրահանգ է ուղարկած խոյս տալու անօգուտ բնդհարումներից, մինչև որ երեք պետութիւնները վճռեն, թէ ինչ պիտի անել։

ԲԵՐԼԻՆ. — Ռայխստագում քննւում էր Սամօայի կղզիների մասին մի հարցապնդում, որ արել էին բոլոր կուսակցութիւնները, բացի ընկերվարական-ռամկավարականներից։ Ննէթ-բարտուղար Բիւլովը յայտարարեց, որ Գերմանիան յարգում է ուրիշի իրաւունքները, բայց միևնոյն ժամանակ թոյլ չի տալիս, որ ոտնձգութիւններ լինի իւր իրաւունքների և չահերի դէմ։ Այնուհետև Բիւլովը հաղորդեց, որ Անգլիան վերջնականապէս ընդունել է գերմանական առաջարկութիւնները Սամօայի յանձնաժողովի վերաբերմամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 ապրիլի. — Հանքային ինստիտուտի խորհուրդը յայտարարում է. «Ապրիլի 5-ին սկսուող քննութիւններին ուսանողներին թոյլ կըտրուի ներկայանալ միայն իւրաքանչիւր քննութեան համար արուած մուտքի առանձին տոմսակով։ Տոմսակները կուղարկուեն նրանց տունը։ Առանց յարգելի պատճառներու քննութեանը չներկայացողները կարձակուեն ինստիտուտից»։

ՊԱՐԻԶ. — «Figaro»-ում տպագրուած է 13 ցոյցմունք։ Դրևնիէն խոսում է Լատերհազիի այն չանքերի մասին, որ նա գործ էր դնում գլխաւոր չաբը մանելու համար։ Ժաննէլն ասաց, որ ինքը Դրայֆուսին բան էր տուել «հրացանագործութեան ձեռնարկը»։ Ինչ և Վալդան կապիտանները հաստատում են Լաուտի ցուցմունքները։ Կոնսիերժ Էստերհազիի կինը, Պրան, հաղորդում է իւր մօտ տեղի ունեցած խօսակցութիւնները։

«Eclair»ը տպում է Փրկութեան կղզիների նահանգապետի հոկտեմբեր 26-ի կամ 25-ի պաշտօնական զեկուցումը, որի մէջ հաղորդւում է, թէ Դրայֆուսի ինչպէս ընդունեց իւր գործի վերարտադրութեան լուրը։ Դանիէլն ասում է, որ Դրայֆուսը կնոջը գրել էր, թէ մտադիր է անձնասպանութեամբ վերջ տալ իւր կեանքին։ Վճռաջինջ առեանի այն պահանջին, որ ցոյց տայ իւր պաշտպանութեան միջոցները, Դրայֆուսը պատասխանեց, որ ինքը ոչինչ չի կարող ասել, ոչինչ չի յիշում։ Մի անգամ նա ասաց բժշկին. «Երկիւղ են կրում, թէ մի գուցէ կլինս ցոյց տայ այն չարարաստիկ նամակը, որի համար մեղադրում են ինձ. վախենում եմ, թէ մի գուցէ այդ բանն իմանայ գերմանական կայսրը. բայց մինթէ չեն սարսափում այն բանից, որ կինս, վերցնելով իւր երկու փոքրիկ զաւակներին, կարող է ընկնել կայսրի ոտները և արդարադատութիւն աղերսել»։ Դրայֆուսը Դանիէլին ասաց նմանապէս, որ հաղորդելու ոչինչ չունի ասելին, իսկ նոյեմբերի 24-ին նա գրեց Դանիէլին, թէ իւր գաղի ժամանակ ինքը լսողել էր Պերիէին, որ իրեն գատեն հրապարակով։ Պերիէն համաձայնութիւն էր յայտնել որոշ պայմաններով. և Դրայֆուսը երգում էր տուել այդ պայմանները պահպանել։ Բայց և այնպէս մերժեցին նրան հրապարակով գատել անյայտ պատճառներով։ Ընդսմին Դրայֆուսը մի քանի անգամ կրկնեց, որ իւր պաշտպանութիւնը գտնւում է կնոջ և Դըմանժի ձեռքին։

ՊԱՐԻԶ. — Կապիտան Փըչչեստերը, Դրայֆուսի գատաւորներից մէկը, որ Լոկրուային մի նամակ էր գրել, որի մէջ կասկած էր յայտնում գատավճռի օրինականութեան մասին, Լոկրուայից թոյլտութիւն է ստացել ուղղակի դիմելու վճռաջինջ ատեանին և կամ գրաւոր, կամ բերանացի հաղորդելու այն, ինչ որ նա օգտակար է համարում ճշմարտութիւնը երևան հանելու համար։

ԼՈՆԴՈՆ. — Գատապարտուորների ժողովը, 167 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 65-ի, ընդունեց Վէյ-քայ-Վէյի վերաբերեալ յօդուածը։ Հակառակութիւնների մէջ ոչինչը յայտարարեց, որ կառավարութիւնը մտադիր չէ Վէյ-քայ-

Վէյը ծովային առաջնակարգ կայան դարձնելու և Վէյ-բայ-Վէյի վրայ այն յոյսը չունի, ինչ որ Ռուսիան Պորա-Ռատուրի վրայ։

ՊԱՐԻԶ. — Անձնասպանութեամբ իր կեանքին վերջ տալու միտքը, որի մասին յիշում է Դանիէլի զեկուցման մէջ, Դրայֆուսը յայտնել էր նախքան վերաքննութեան մասին տուած խնդիրքն ընդունելի լինելու մասին վճռաբեկ ատեանի կայացրած որոշումը։ Դանիէլի հետ ունեցած խօսակցութիւնների և նրա գրած նամակների մէջ Դրայֆուսը պնդում է, որ ինքն անմեղ է և չի տարակուսում գեներալների մանաւանդ Ռուազեֆրի օրինական ընթացքի մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի—ի նկատի ունենալով, որ «Բիրժևիա Վեդոմոստի» լրագիրը խանգարել է մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կարգադրութիւնը № 91-ի մէջ զետեղած առաջնորդող յօդուածի մէջ, ներքին գործերի մինստրը որոշեց՝ «Բիրժևիա Վեդոմոստի» լրագրին յայտնել երրորդ նախազգուշութիւնը դադարեցնելով այդ լրագիրը երկու ամիս ժամանակով։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)
(սեպհական տուն)
Հեռախօս № 230

Երեխեկ հիւանդների ընդունելութիւն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամ 2—4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Դիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի արուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Հունկորները ձրի են։ Դինեկոլգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուա համար. ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր մի օրուգիշերուայ համար։ Երկունքին ազատելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Օրթևեկ բոլոր հիւանդները դեղերն ու նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Հունկորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տնօրէն
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

—

ԴՈԿ. Ռ. Ս. ՀԵՐՑՖԷԼԴ

որ իւր մասնագիտութիւնը պարապել է Վիեննայում, ընդունում է կաշուի, վեներական, միզակալ և սիֆիլիտիկական հիւանդութիւններ ունեցողներին՝ ամեն օր առաւօտեան 9—11 ժամը և երեկոյեան 5—8 ժ.։ *Մաղերեան փողոց, № 5 Հիսցեի տուն։*

ՌԱՋՄԱՎԻՐԱԿԱՆ ՁԱՆԱՊԱՐՀ

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերում է Մլէթում և հասնում է Վլադիկաւկաս միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկաւկաս միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 3 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկաս միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 9 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկաւկաս միւս օրը եր 11 ժ. 20 ր.։

Վլադիկաւկասից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլէթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Գազաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օր եր.7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՆԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է օրուայ 4 ժ. 15 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 8 ժ 38 ր. մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 20 ր., հասնում է Բաթում եր. 8 ժամին 52 ր.

Պոստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է գիշ. 10 ժ. 50 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 5 ժ. 9 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* եր. 6 ժ. 10 ր., հասնում է Բաթում առ. 7 ժամին։

Մարդատար գնացքը № 2 մեկնում է Բաթումից Թիֆլիս առ. 8. ժ. 30 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 8 ժ. 30 ր., մեկնում է *Թիֆլիսից Բագու* եր. 9 ժ. 15 ր., հասնում է Բագու օրուայ 1 ժամին։

Պոստային գնացքը № 4 մեկնում է Բաթումից Թիֆլիս եր. 8 ժ. 40 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 9 ժ. 55 ր., մեկնում է *Թիֆլիսից Բագու* առ. 11 ժ. 20 ր., հասնում է Բագու առ. 5 ժ. 42 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԸՐԳԱՍ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Վերջերս լոյս ընծայած «Արաքս» ի գիրքը պարունակում է ազգային անցեալ և ներկայ կեանքին վերաբերեալ զանազան զրուածքներ և 46 նկար, որոնցից 35 բոլոր հայկական կեանքից։

Երկրորդ գիրքը կը հրատարակուի ան համեմատ չքեղ նկարներով։

«Արաքս»-ի բաժանորդագինն է 3 բուբլի կամ 10 ֆրանք։

Դիմել այս ազատով հասցէով՝
Петербургъ, Симеону Гуламиранцу, կամ St.-Pétersbourg, Siméon Goulamiriantz. (33) 5—5

ՀԱՆԴԷՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

Փողոցային

3, 4, 5 և 6 գրքերի մնացած օրինակները վաճառւում են միասին 3 բուբ. ճանապարհածախսով։ Յանկացողները դիմում են հրատարակչին հետեւեալ հասցէով. Москва, Малый Златоустовскій пер., д Гиршъ, Типографія Бархударянъ

10—10

Չուշի քաղաքի Ազուլեայ Ս. Աստուածածնայ առաջ եկեղեցւոյ երիտասարդ հոգեւոր հովիւ Տարաւագետ գտաւում գրանուած եկեղեցապատկան կալուածքը, որ են՝ ՕՅՆԱՁՈՒՐ և ՂԱՀՂԱՀԱՂ գիւղերը և Բաղջաջըղ կոչուած ՎԱՐԵԼԱՁՈՂԸ արուում է **ԱՃՈՒՐԴՈՎ** ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ժամանակով. յանգկացողները կարող են պայմանների հետ ծանօթանալ՝ դիմելով Շուշի՝ նոյն եկեղեցւոյ երէցփոխ Խաչատուր Խաչատրեանցին և կամ կալուածոց իսնամակալ Թալիշ-բէկ Դոլուխանեանցին։

Երէցփոխ՝ Խաչատուր Համբարձումեան Խաչատրեանց.

Խնամակալ՝ Թալիշ-բէկ Դոլուխանեանց։

(38) 3—3

ԱՄԵՆԱՑԱՑՏԻ ԴՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՌՈՅԵԱԼՆԵՐ

ԹԱՇՆԱՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Փիսհարմոնիումներ, չուէյտկներ կիթառներ, ֆլէյտներ, կլարնետներ, ձայնախողովկներ, լարեր և այլն և այլն

Բոլոր տեսակ գործիքների համար գիներ կարելի է վճարել մաս առ մաս.

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐՆ

ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆ ԶՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՀԱՅՆԱՄԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ

Դ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
МУЗЫКАЛЬНОЕ ДЕПО
В. М. МИРИМАНЯНЪ
ТИФЛИСЪ, ДВОРЦОВАЯ ул.
36—7

! ՉՓՈԽՇԱՏԵՔ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ !

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՄՈՍԿՎԻՈՐԿԻ ԾՈՓՐԻՆԻ

Օ Ճ Ա Ռ

ԴԵՂԱՏՈՒՐՔ

Գ. Ֆ. ԻՐԳԵՆՈՎԻ

Ոչնչացնում է մուներ, արևից այրուածքը, դեղին բծերը, ելունդները, բշտիկները և ապրում է աւելորդ քրտնելու դէմ։ Առաջարկւում է որպէս արդուզարդի անուշահոտ բարձր որակութեան օձառ։

Մի կտորի գինը 50 կ., ½ կտորինը 30 կ.։ Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։

Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար՝ Դ. Ֆ. Իւրգենսի մօտ, Մոսկուայում Դեպոն Թիֆլիսում դեղատնային առանքների առևտրի ընկերութեան, Ֆուրինովի, պ. պ. Պոպովի և Ղամսուրովի դեղատներում։

(М.) 6751 24—6

Շատ շուտով լոյս կը տեսնի

ԴԱՐԱԴԱՇՑԻ

«ԿՆՔԱՀԱՅՐ»

վէպը

Ա. և Բ. *Հատոր*

(32) 6—6

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՍԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳԻՒՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ

Առանում սոյն ապրիլի 9-ին նշանակուած է

ԱՃՈՒՐԴ

առանց կրկնաճրպի վարձու տալու ս. Էջմիածնի կալուածքի վերին յարկը, որ գտնւում է Պուշկինեան փողոցի վրայ 5-րդ քաղաքամասում։ Պայմանների մասին ծանօթանալ Կոնսիստորիայի պիւանատուներ։

Անդամ Կոնսիստորիայի Գրիգոր ար. ք. Տէր-Բարսէղեանց։

(45) 3 2

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿԸՐ ՈՒ ՉԵՒԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՄ

Ապրիլի 4-ին, 5-ին և 6-ին տեղի կունենայ աշակերտուհեայ ձեռագործների վաճառումն առաւօտեան ժամը 10—3-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։ Գանովսկայա № 25։

(44) 4—4

ՆՈՐ ԲԱՑՈՒԵԼԷ

ՀԻՒՐԱՆՈՑ „ՄՈՍԿՈՒԱ“

ԱՆՈՒՆՈՎ

Թիֆլիսում, Զուղուրլի քաղաքամասում,

ԲՈՒՀԱՐԵԱՆԻ ՏԱՆ.

Զատ մարդուր կահաւորուած սենեակներ արժան գներով՝ օրական 40 կոպէկից սկսած մինչև 1 բուբլի։ Հիւրանոցի առաջով անցնում է ձիաքարշի գիծ։ Յարգելի հիւրերն ըստ ամենայնի պոհ կըմնան, որի համար երաշխաւորւում եմ

ՎԱՀԵԹԱՆՑ ԳՈՒԶԱՐԵԱՆ.

(30) 10—7.

ՆՈՏԱՐ

ԼԵՒԱՆ ՅԱԿՈՎԲԵԱՆ

ՄՂԵՔԵԱՆԻ

գրասենեակը բաց է և գտնւում է քաղաքի 4-րդ մասում, Երևանեան հրապարակի և Գանովեան փողոցի անկիւնում, Գուրգենովի տանը, № 2, քաղաքային տան կողքին, Թամամշեանի քարվանսարայի դիմաց։

(4) 30—25

ВАЛЬЕТМЕЙСТЕРЪ

ВАРШАВСКИХЪ ПРАВИТЕЛЬСТВЕН. ТЕАТРОВЪ И УЧИТЕЛЬ ТАНЦЕВЪ

ВЪ ТИФЛИССК. МУЖСК. ГИМНАЗІИ

М. М. ОВЕРМО

Настоящимъ доводитъ до вѣдѣнія почтенѣйшей публики что онъ на дняхъ выѣзжаетъ въ г. **Баку** всего только на одинъ мѣсяцъ. Здѣсь же его женой уроки продолжаются.

Михайловская ул. д. № 92.

Отъ 2 до 6 час. вечера. 10—4

БЕРНДОРФСКІЙ МЕТАЛЛИЧЕСКІЙ ЗАВОДЪ



АРТУРЪ КРУППЪ.

ВЪ МОСКВѢ

НА КУЗНЕЦКОМЪ МОСТУ

Хозяйкамъ и экономкамъ предлагаетъ свои столовые ножи, вилки и ложки, серебреные и мельхіоровые, по фабричнымъ цѣнамъ.

МАГАЗИНЪ «АЛЬПАКА» МЕТАЛЛЪ

Чистое серебро 84 пробы, никель, мельхіоръ, столовые ножи, вилки и ложки, чайные ложки, подносы, самовары, кофейники, чайники, сахарницы, сухарницы, масленки, солонки, перечницы, горчичницы, рюмки, стаканы, бокалы, рюмки для ликера, графины, рюмки для водки, подсвѣчники, канделябры, лампы, ламповые стекла, ламповые горѣлки, ламповые колпаки, ламповые абажуры, ламповые шары, ламповые подставки, ламповые кольца, ламповые крышки, ламповые трубки, ламповые фитили, ламповые винты, ламповые пружины, ламповые шестерни, ламповые валики, ламповые оси, ламповые подшипники, ламповые втулки, ламповые гайки, ламповые болты, ламповые шайбы, ламповые заклепки, ламповые штифты, ламповые шплинты, ламповые пальцы, ламповые рычаги, ламповые тяги, ламповые педали, ламповые ремни, ламповые цѣпи, ламповые звѣздочки, ламповые муфты, ламповые соединенія, ламповые переходы, ламповые тройники, ламповые колѣна, ламповые отводы, ламповые фланцы, ламповые прокладки, ламповые сальники, ламповые набивки, ламповые уплотненія, ламповые герметики, ламповые клеи, ламповые краски, ламповые лаки, ламповые эмали, ламповые грунтовки, ламповые шпаклевки, ламповые замазки, ламповые мастики, ламповые пасты, ламповые порошки, ламповые растворы, ламповые эмульсіи, ламповые суспензіи, ламповые коллоиды, ламповые гели, ламповые пленки, ламповые покрытія, ламповые отдѣлки, ламповые украшенія, ламповые орнаменты, ламповые гравюры, ламповые чеканки, ламповые тисненія, ламповые золоченія, ламповые серебренія, ламповые никелированія, ламповые хромированія, ламповые оксидированія, ламповые фосфатированія, ламповые цинкованія, ламповые кадмированія, ламповые свинцованія, ламповые оловянированія, ламповые мѣдненія, ламповые латуненія, ламповые бронзированія, ламповые алюминированія, ламповые магнезированія, ламповые кальцинированія, ламповые прокаливанія, ламповые обжиги, ламповые спеканія, ламповые плавленія, ламповые литья, ламповые ковки, ламповые штамповки, ламповые прессованія, ламповые волочения, ламповые прокатки, ламповые ротации, ламповые экструзіи, ламповые выдавливанія, ламповые гибки, ламповые правки, ламповые рихтовки, ламповые калибровки, ламповые обрѣзки, ламповые пробивки, ламповые сверленія, ламповые зенкованія, ламповые развертыванія, ламповые нарѣзанія, ламповые накатки, ламповые насѣчки, ламповые шлифованія, ламповые полированія, ламповые доводки, ламповые притирки, ламповые хонингованія, ламповые суперфинишированія, ламповые галтованія, ламповые пескоструйныя обработки, ламповые дробеструйныя обработки, ламповые гидроабразивныя обработки, ламповые ультразвуковыя обработки, ламповые электроэрозіонныя обработки, ламповые электрохимическія обработки, ламповые электронно-лучевыя обработки, ламповые лазерныя обработки, ламповые плазменныя обработки, ламповые ультрафіолетовыя обработки, ламповые инфракрасныя обработки, ламповые рентгеновскія обработки, ламповые гамма-обработки, ламповые бета-обработки, ламповые альфа-обработки, ламповые нейтронныя обработки, ламповые протонныя обработки, ламповые ионныя обработки, ламповые электронныя обработки, ламповые позитронныя обработки, ламповые мезонныя обработки, ламповые пионныя обработки, ламповые каонныя обработки, ламповые гиперонныя обработки, ламповые барионныя обработки, ламповые лептонныя обработки, ламповые кварковыя обработки, ламповые глюонныя обработки, ламповые бозонныя обработки, ламповые фермионныя обработки, ламповые суперсимметричныя обработки, ламповые струнныя обработки, ламповые М-теоретическія обработки, ламповые F-теоретическія обработки, ламповые D-теоретическія обработки, ламповые E-теоретическія обработки, ламповые G-теоретическія обработки, ламповые H-теоретическія обработки, ламповые I-теоретическія обработки, ламповые J-теоретическія обработки, ламповые K-теоретическія обработки, ламповые L-теоретическія обработки, ламповые M-теоретическія обработки, ламповые N-теоретическія обработки, ламповые O-теоретическія обработки, ламповые P-теоретическія обработки, ламповые Q-теоретическія обработки, ламповые R-теоретическія обработки, ламповые S-теоретическія обработки, ламповые T-теоретическія обработки, ламповые U-теоретическія обработки, ламповые V-теоретическія обработки, ламповые W-теоретическія обработки, ламповые X-теоретическія обработки, ламповые Y-теоретическія обработки, ламповые Z-теоретическія обработки.

(М.) № 26,886. 10—2.

Дозв. цензурою Тифлисъ, 5 го апрѣля дня, 1899 г. Типографія А. И. Петрова, Голов. проспектъ домъ № 13. Телефонъ№ 378